ԹԵՄԱ 4 ՄԻՋՆԱԴԱՐԻ ԱՎԱՐՏԸ: ՓՈՓՈԽՎՈՂ ՅԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

§ 56. ՆԻԴԵՐԼԱՆԴԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

1

Նիդերլանդները իսպանական գանձարանին չորս անգամ ավելի եկամուտ էր բերում, քան նրա բոլոր անդրօվկիանոսյան գաղութները: Սակայն Իսպանիան ամեն կերպ ճնշում էր նահանգների ինքնավարությունը, հարկերը և տուրքերը բարձրացնելով՝ թալանում էր երկիրը, այդպիսով արգելակում էր արտադրության և առևտրի զարգացումը: Երկիրը հարստահարում էր և կաթոլիկ եկեղեցին, որը, տասանորդից բացի, բարձր տուրքեր էր գանձում բնակչությունից իր ծառայությունների դիմաց (կնունք, թաղում, ամուսնություն և այլն): Պատահական չէ, որ Նիդերլանդներում լայնորեն տարածվում էր բողոքականությունը: Երկրի բնակչության բոլոր խավերը դժգոհ էին Իսպանիայի տիրապետությունից:

2

Ալբան դահճի կացինն ու ինկվիզիցիայի խարույկը համարում էր երկիրը կառավարելու լավագույն միջոցները: Նա հատուկ դատարան ստեղծեց՝ «Խռովարարների գործերի խորհուրդ» անունով, որի որոշմամբ ավելի քան 8000 մարդ մահապատժի ենթարկվեց: Նոր ավելի բարձր հարկեր դրվեցին առևտրականների և արդյունաբերողների վրա: Առևտուրը կանգ առավ, մանուֆակտուրաները փակվեցին, հազարավոր մարդիկ մնացին անաշխատանք: Շատերը, վաճառելով իրենց ունեցվածքը, սկսեցին հայրենիքից հեռանալ:

3

Պայքարը իսպանական տիրապետության դեմ գլխավորում էր բուրժուազիան՝ դրամատերերը, առևտրականները, արդյունաբերողները: Սակայն հեղափոխության թափից վախեցած բուրժուազիան որոշեց իշխանությունը կիսել ազնվականության հետ: Ապստամբած նահանգների կառավարության ղեկավար «ընտրվեց» Նիդերլանդների ամենահարուստ հողատերը՝ իշխան ***Վիլհելմ Օրանցին***:

4

Լեյդենի պաշարումը ոտքի հանեց բոլոր քաղաքացիներին: Մինչ տղամարդիկ կռվում էին, կանայք ու երեխաները նոր ամրություններ էին կառուցում: Բնակիչները հետ էին մղում իսպանացիների գրոհները և համարձակ հակագրոհներ կատարում: Քաղաքում շուտով սննդամթերքը սպառվեց և սով սկսվեց: Երբ իսպանացիները առաջարկեցին հանձնվել, քաղաքի պաշտպանները նրանց պատասխանեցին. «Քանի դեռ դուք այս պատերի հետևում կլսեք շների հաչոցն ու կատուների մլավոցը, իմացեք, որ քաղաքը կանգուն է: Գիտցեք, որ մեզնից յուրաքանչյուրը կուտի իր ձախ ձեռքը, որպեսզի աջով պաշտպանի իր ազատությունը»:

Լեյդենցիներին օգնության եկան ծովային գյոզերը: Նրանք քանդեցին ծովափնյա պատվարները, ծովի ջուրը հեղեղեց Լեյդենի շրջակա տարածքը, գյոզերի նավերը մտան քաղաք: Իսպանացիները փախուստի դիմեցին:

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՆՅՈՒԹԵՐ ԵՎ ՓԱՍՏԵՐ

Հոլանդական արևելահնդկական ընկերությունը

1602 թ. Հոլանդիայի արևելահնդկական ընկերությունը Ասիայում առևտուր անելու մենաշնորհ ստացավ: Կարճ ժամանակում այդ ընկերությունը սկսեց վերահսկել համեմունքների եվրոպական առևտուրը և վերածվեց խոշորագույն առևտրական ընկերության աշխարհում: Այդ առևտրական ընկերությունը առաջինն էր, որը բորսայում սկսեց բաժնեմասեր վաճառել:

Հոլանդական արևմտահնդկական ընկերությունը

1621 թ. ստեղծվեց հոլանդական արևմտահնդկական ընկերությունը: Եթե արևելահնդկական ընկերությունը գերիշխող դիրք ուներ Ասիայի հետ առևտրում, ապա արևմտահնդկական առևտրական ընկերությունը կարճ ժամանակամիջոցում սկսեց վերահսկել Ամերիկայում և Արևմտյան Աֆրիկայում առևտուրը: Հոլանդական առևտրական ընկերությունները այնքան հզորացան, որ կարող էին դաշինքներ կնքել, անգամ նոր գաղութներ նվաճել: